

Իշխանություններն օգտագործեցին պատեհ առիթը

Մարտ 19, 2007

Պարզունակ սցենար

Ժիրայր Սեֆիլյանի ընկերները միանշանակ համոզված են, որ նրան մեկուսացրել են խորհրդարանական ընտրությունների պատճառով, քանզի Ժիրայրն ունի մեծաթիվ համախոհներ, եւ նա կարող էր նաեւ ընդդիմության համախմբման առանցք դառնալ: Սակայն, եթե իշխանություններն իսկապես վախեցել են Սեֆիլյանից եւ կալանավորել նրան, ապա հետագա գործընթացներից բնավ չզգացվեց, թե ընդդիմադիր ուժերը կարող էին միավորվել ինչ-որ գաղափարի, առանցքի շուրջ, այնպես հենց կալանավորման փաստը կարող էր նրանց միավորել:

Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ժ. Սեֆիլյանի կալանավորումը հստակ սցենար է ունեցել: Սակայն ԱԱԾ աշխատակիցները կարողացել են հաշվարկել ընդամենը մի քանի պարզունակ քայլ:

Այսպես՝ Ժիրայր Սեֆիլյանի գինակիցներից մեկին՝ Արարատի մարզի Լուսառատ գյուղի բնակիչ Վահան (Վանո) Արոյանին, ԱԱԾ-ի աշխատակիցները տեղեկացնում են, որ Ժիրայրին ձերբակալելու են: Վանոն զանգում է Ժիրայրին եւ այդ մասին հայտնում նրան: Ժիրայրի կողմակիցների կարծիքով՝ ԱԱԾ-ին էլ հենց դա էր պետք, որովհետեւ հետագայում ԱԱԾ-ի աշխատակիցները, ձեւակաւորեն այս զանգի վրա հիմնվելով, պիտի «այցելեին» Վանոյին:

Ժիրայրի ձերբակալությունից 19 օր անց ԱԱԾ-ն Սեֆիլյանի եւ Մալխասյանի գործի շրջանակներում կալանավորում է Վանոյին եւ նրա տանը մեծ քանակությամբ զինամթերք է «հայտնաբերում» (Արոյանի «վնասագերծումը» ԱԱԾ-ն պետք է հանրությանը ներկայացնէր որպես իր օպերատիվ եւ մանրակրկիտ աշխատանքի արդյունք) : Իսկ Վանոյի տանը հայտնաբերված զինամթերքը, ԱԱԾ-ի դիտարկմամբ, կուտակվել է՝ իբր Սեֆիլյանի եւ նրա կազմակերպությունների ծրագրերն իրագործելու համար: Սակայն Վանոյի զենքերի մասին ԱԱԾ-ն քաջ գիտեր, որովհետեւ Վանոյի հետ ԱԱԾ-ում ծանոթ են եղել:

« Վանոն սերտ հարաբերություններ ուներ ԱԱԾ-ից շատերի հետ: Ապրելով սահմանին մոտ՝ նա ազատ մուտք ու ելք ուներ ուղեկալներ: Դրանց պետքը պարբերաբար դիմել են իր օգնությանը: Գիտեմ, եւ նույնիսկ հեռուստատեսությամբ է ցուցադրվել, որ այնտեղ Վանոն մասնակցել է ինչ-որ իրավապահ օպերացիաների: Ոստիկանությունում էլ շատ ծանոթներ ուներ», - փետրվարի 20-ին մեկուսարանում պատգամավորական խմբի անդամների հետ հանդիպման ժամանակ ասում է Ժ. Սեֆիլյանը, ով, իր իսկ խոսքերով, տեղյակ չի եղել Վանոյի զինամթերքի մասին: Ժիրայրի կողմակիցների հավաստմամբ՝ Արոյանը զենքի նկատմամբ սեր միշտ էլ ունեցել է, իսկ պատերազմի ժամանակ նրա տանը կուտակված զենքը գինադրարից հետո օգտագործվել է սահմանախախտների դեմ, եւ հիմա այս ամենը ԱԱԾ-ն շուռ է տվել Սեֆիլյանի դեմ:

Եվ եթե ԱԱԾ-ն հայտարարի, որը ինքը տեղյակ չէր Վանոյի տանը այդչափ զենքի առկայության մասին, նշանակում է երկրի նախագահը պարտավոր է այդ կառույցն անմիջապես լուծարել, որովհետեւ այդ զենքերի մասին գիտեր ցանկացած լուսառատացի:

Ժ. Սեֆիլյան. «Սա քաղաքական պատվերով սարքված գործ է»

Անդրադառնանք պատգամավորական խմբի հետ զրույցում Սեֆիլյանի տված պատասխաններից մի քանիսին:

Իր կենսագրականում Սեֆիլյանն ասում է, որ 1994-ին անդրանիկ որդու ծննդյան առիթով մեկնել է Բեյրութ: Մյուս կողմից՝ հայտնի է, որ այդ ժամանակ ընթանում էր «Դրոյի» գործի նախաքննությունը («Դրո» խմբի ահաբեկչությանը զոհ էին դարձել 3 հոգի), եւ Սեֆիլյանը կասկածյալների թվում էր: Մամուլում գրվել է, որ Սեֆիլյանը նախաքննության ժամանակ հաջողացրել է հեռանալ ԶԶ-ից: Մեջբերենք «Առավոտ» օրաթերթի 29.03.2006 համարում տպագրված հոդվածից մի հատված. « Ժամանակին մենք հրապարակել ենք «Դրո» գործի այն նյութերը, որոնք վկայում են, թե Ժիրայր Սեֆիլյանն այդ ահաբեկչական խմբի վարչության մարմնի անդամ էր, եթե ոչ հենց ղեկավարը: Այդ ժամանակ պրն Սեֆիլյանը դաշնակցական էր (հետո հեռացվեց), եւ նրանով ավարտվում էր շղթան, թե՞ ոչ՝ հայտնի չէ: Քանի որ նախաքննության ընթացքում պրն Սեֆիլյանը բարեհաջող հեռացավ Զայաստանից Լիբանան եւ վերադարձավ միայն իշխանափոխությունից հետո: Իրավապահներն այլեւս փորձ չարեցին նրան հարցեր ուղղել այդ գործի մասին: Մի անգամ մենք փորձեցինք ուղղել «Դրոյի» նյութերից բխող հարցադրումներ, սակայն պրն Սեֆիլյանը հրաժարվեց՝ նշելով, թե դեռ այդ մասին խոսելու ժամանակը չէ»:

Թերեւս հենց այս նախադեպն է Սեֆիլյանի նկատմամբ կալանք կիրառելու հիմք տվել ԱԱԾ քննչական խմբին եւ դատարանին, ինչն էլ զայրացրել է վերջինիս փաստաբան Վահե Գրիգորյանին: Փաստաբանն անհեթեթ է համարում դատարանի այն հիմնավորումը, թե Սեֆիլյանը, ազատության մեջ լինելով, կարող է թաքնվել: Սեֆիլյանն իր կենսագրության մեջ չի նշում նաեւ, որ 1999-ին հեռացվել է ԶԶ-ի շարքերից:

ԱԱԾ-ն գտնում է, որ «Զայ կամավորականների համախմբման» հավաքում արված իշխանափոխական որոշ հայտարարություններ հակասում են օրենքին: «Եթե իշխանափոխության կոչը հանցանք է, ապա այդ

մեղադրանքով կարելի է դատել Հայաստանի բնակչության առնվազն կեսին»,- մեկուսարանում պատգամավորների հետ հանդիպման ժամանակ ասել է Սեֆիյանը:

Իշխանափոխության կոչը, իհարկե, մեր օրենսդրությամբ հանցանք չէ, սակայն հանցանք է համարվում բռնի ուժով, գեներով ու զինված պայքարով իշխանափոխությունը, ինչի կոչեր էլ, ըստ ԱԱԾ-ի, արվել են հավաքի ընթացքում. «Օր առաջ գեներով, զինված պայքարով, ապստամբությամբ, ամեն ինչով, ամեն մի միջոցներ պիտի գործի դնենք, որ ազատվենք այս բողոքական թուրքերից, որ միայն ազգանունն է հայ... Սրանց հետ պիտի իրենց ձեռով պայքարել՝ արյուն, կրակ թշնամու վրա, բոլոր ձեռերով, բոլոր միջոցներով: Կարճ, ուղիղ՝ երկիրը զավթված է թշնամու կողմից, թշնամին ոչ թե ճակատում, այլ ներսում է, պիտի ազատագրենք: Բոլոր ձեռերով (Վ. Մախասյան): Եկեք միջոցների մեջ խտրականություն չդնենք: Ես համաձայն եմ, իրոք, չդնենք... Մենք ընդդիմությանը խոսք կարող ենք հասկացնել, սկիզբը խոսքով, եթե պետք լինի՝ նաեւ վախեցնելով, պարտադրելով (Ժ. Սեֆիյան):»:

Այս հայտարարությունները, ըստ ԱԱԾ-ի, դատապարտելի են ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով («Պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված հրապարակային կոչերը պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատագրվմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»):

Ըստ ԱԱԾ հաղորդագրության՝ Սեֆիյանի մոտ ձերբակալման պահին հայտնաբերվել է ապօրինի հրազեն: «Մակարով» տեսակի ատրճանակը պարզել է, որ ստացել էմ բանակի հրամանատարությունից: Որպես սպա՝ ես 1990 թ.-ից մշտապես ատրճանակ եմ կրել»,- հակադարձում է Սեֆիյանը: Տրամաբանական է այն, որ Սեֆիյանի նման հարուստ զինվորական կենսագրություն ունեցող մարդը եւ ԼՂՀ պաշտպանության բանակի նախկին փոխգնդապետը անվանական ատրճանակ կունենար: Սրան հավելենք նաեւ փաստաբան Վ. Գրիգորյանի պատմածը «Հայկական ժամանակին», ըստ որի՝ Սեֆիյանն ինքն է ԱԱԾ աշխատակիցներին տեղեկացրել, որ իր մոտ ատրճանակ կա, երբ ձեռնաշղթաներով արդեն գտնվելիս է եղել ավտոմեքենայում:

Ժ. Սեֆիյանը եւ նրա կողմակիցները համոզված են, որ այս ամբողջ պատմությունը (Սեֆիյանի՝ ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը երկու անգամ անհիմն ձեռով մերժելը, ակտիվիստների ձերբակալությունը) քաղաքական նպատակ ունի: «Վերջին 5-6 տարիների ընթացքում ԱԱԾ աշխատակիցներն ինձ պարբերաբար հրավիրել են զրույցի: Բոլոր դեպքերում պատճառը իմ հասարակական ակտիվությունը, ընդդիմադիրների հետ ունեցած շփումներն ու ընդհանուր ընդդիմադիր կենցաղն է եղել: Վերջին անգամ հրավիրել են 2006թ. մարտի վերջին: Ամենախիստ խոսակցությունն էր, սպառնացին, որ եթե չդադարեցնեմ «անօրինական» գործունեությունս, ապա կվտարեն: Հայտարարված պատճառը Ջավախքի հարցում իմ ավելի արմատական դիրքորոշումն էր, բայց իրականում ավելի շատ անդրադարձան հայտնի զույգի դեմ (Ռ. Զոչարյան եւ Ս. Սարգսյան) իմ ելույթներին»,- ասում է Սեֆիյանը:

Նա վստահ է, որ Զոչարյան-Սարգսյան զույգն իրեն չեզոքացնելու պատճառներ ունի. «Ո՛չ Արցախի, եւ ո՛չ էլ Ջավախքի խնդիրները իմ ձերբակալության ուղղակի պատճառները չեն: Առաջնահերթ պատճառը ընտրություններն են: Մենք շատ լավ գիտակցում ենք, որ թե՛ Արցախի, եւ թե՛ Ջավախքի հարցում այս ընտրություններից հետո ստեղծված իրավիճակը շատ կարեւոր է: Բացի այդ, հրատապ է դարձել ներքին բարոյական մթնոլորտը բարեփոխելու խնդիրը: Ուստի որոշել էինք, որոշ չափով նաեւ նախապատրաստվել էինք եւ հայտարարեցինք, որ բռնելու ենք կեղծարար ձեռքը եւ թույլ չենք տալու, որ ձեռք բարձրացնեն ժողովրդի վրա: Դրա համար անհրաժեշտ էր կազմակերպվել, եւ մենք աշխատում էինք այդ ուղղությամբ: Մենք ակնկալիքներ չունեինք այդ ընտրություններից, այլ համախմբվում էինք՝ ծառայելու համար: Սա էր հիմնականը եւ այն նոր երեւույթը, որ սարսափեցրեց իշխանություններին: Բացի այդ, մենք ինտենսիվ շփումներ եւ որոշակի ազդեցություն ունեինք որպես ընդդիմադիր հանդես եկող քաղաքական ուժերի վրա: Որոշների հետ մեր կապերը բավականին սերտ էին, եւ վերարտադրվել փորձող իշխանությունները դրանում նույնպես կարող էին վտանգ տեսնել»:

Ամենայն հավանականությամբ, «Հայ կամավորականների համախմբման» հավաքում հնչած ծայրահեղական կոչերն ու հայտարարությունները Սեֆիյանին չեզոքացնելու ցանկացող իշխանություններին ակամայից լավ առիթ են տվել գործի անցնել արդեն օրենքի շրջանակներում՝ թաքցնելով իրական նպատակները: Սա թերեւս գիտակցել է նաեւ ինքը՝ Սեֆիյանը, ինչն ապացուցվում է նրա փաստաբանի հետեւյալ խոսքով. «Ժիրայրը հրաժարվում է նախաքննության մարմնին ցուցմունք տալուց: Նա մեկ-երկու նախադատությամբ ցուցմունք է տվել այն մասին, որ իր նկատմամբ հետապնդումը քաղաքական նպատակ ունի, պարզապես դրսեւորումը քրեաիրավական է»: